# ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿՈՎԲՅՈՒՐՈՅԻՆ ԱՅՍՕՐ ՓՈԽԱՐԻՆԵԼ Է ՄԻՆՍԿԻ ԵՌԱՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ



Լարիսա Ալավերդյանը Հայաստանի Երրորդ Հանրապետության առաջին գերագույն խորհրդի Արցախի հարցերով հանձնաժողովի գլխավոր փորձագետն էր: Ներկայիս Ազգային ժողովի ընտրություններից հետո նման հանձնաժողով չստեղծվեց, պատճառաբանվելով, որ այն իբր «կատարել է» իր առաքելությունը: Բայց արյունոտ հիմնահարցը վաղուց խաղաքարտ է դարձել պետությունների ձեռքին, եւ այդ միտ անհանգիստ արցախցի կինը ավելի մեծ եռանդով շարունակեց իր գործունեությունը, որպես «Ընդդեմ իրավական կամայականության» հիմնադրամի գործադիր տնօրեն:

«Ամերիկայի ձայն» ռադիոկայանը չորս օր՝ օգոստոսի 19-22-ը հարցազրույց հեռարձակեց հմուտ փորձագետի ու հասարակական գործչի հետ, որը ընթերցողին ենք ներկայացնում որոշ կրճատումներով:

*- Տիկին Ալավերդյան, ինչպե՞ս եք գնահատում Ղարաբաղյան խնդրի հանգուցալուծման այսօրվա դինամիկան, բանակցային գործընթացը:*

Սկսած 1992 թվականից մենք ունենք ոչ թե մեկ, այլ մի քանի գործընթաց: Առաջինն այն է, որ ծավալվում է ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում, մյուսները՝ միջազգային այլ հավաքներ, տարբեր կազմակերպությունների միջեւ քննարկվող հարցեր, որոնք առնչվում են Արցախի հետ:

1992թ. փետրվարից սկսած Մինսկի խմբի գործընթացի իմաստն այն եղավ, որ Արցախի հարցը հանվեց իրավական դաշտից եւ մտցվեց մի արհեստական գործընթացի մեջ, որը հիմնականում հարցը քննարկում էր տարածքային ամբողջականության եւ ազգերի ինքնորոշման իրավունքի «իրար հակասող» սկզբունքների շրջանակներում: Մեր կազմակերպությունը, որը սկզբից էլ կոչվում էր «Ընդդեմ իրավական կամայականության», դեմ էր այդպիսի հարցադրմանը: Եվ այսօր, ավելի քան հինգ տարի հետո, պարզվում է, որ այդպիսի ուղղությունը՝ մաքուր քաղաքական քննարկումները, այսօր միայն մեկ դրական արդյունք են տվել՝ զինադադար:

*- Ինչու՞մն է կայանում անհամապատասխանությունը Մինսկի խմբի ձեւակերպման եւ հիմնախնդրի հիմնական պատկերի միջեւ:*

Մեր կազմակերպությունը գտնում է, որ ԵԱՀԿ-ն եւ Մինսկի խումբը բերեցին իրականությանը չհամապատասխանող փաստարկներ, որոնց հիման վրա Ղարաբաղի հայերին տրվեց ազգային փոքրամասնության, իսկ Ղարաբաղի տարածքին՝ անկլավի կարգավիճակներ: Դրանք չեն համապատասխանում ոչ 1992 թվականի, ոչ էլ որեւէ պատմական ժամանակաշրջանում եղած իրավիճակներին: Երկրորդ, անընդհատ խոսվում էր, որ պետք է տապել եւ շատ շուտ ձեռք բերել քաղաքական որեւէ դրական նախաձեռնություն, որը թույլ կտա հաջորդ փուլում քննարկել ԼՂՀ կարգավիճակը: Սա երկրորդ սխալն է: Որովհետեւ, չճշտելով, թե ի՞նչ իրավական դաշտում է դիտվում այդ հարցը, ի՞նչ կարգավիճակ է իրականում համապատասխանում Լեռնային Ղարաբաղի հանրապետությանը, չէր կարելի սպասել Մինսկի խմբի գործընթացից դրական արդյունքներ: Եվ ահա այսօր մենք ունենք հանրահայտ եռանախագահության հայտարարությունը, որը գտել է հետաքրքիր գնահատական: Շատ շատերը գտնում են, որ այդ եռյակը ավելի շատ իրեն դրսեւորել է որպես քաղաքական թվականներին բոլշեւիկյան բյուրոյի իրավահաջորդ, քան ժամանակակից միջազգային նորմերի պաշտպան: Սա պատահական չէ, պատմությունը այս տարածաշրջանում գիտե միայն մեկ զավեշտական որոշում, դա Կովբյուրոյի որոշումն է, որով ԼՂՀ-ն ոչ թե ճանաչվում է որպես Ադրբեջանի մի մաս, այլ ընդամենը որպես ֆեդերատիվ կառույցի մեջ մի ինքնավար կազմավորում: Եվ ահա, այս եռյակը փորձում է նույնանման, ինչպես իրենք են ասում, խորհուրդ տալ՝ ԼՂՀ հարցերը լուծելու համար: Մեր կազմակերպության գնահատականն այն է, որ Մինսկի խումբը, նախ սկսելով որպես միջնորդ, այսօր իրեն դրսեւորում է ինչպես դատավոր: Դա չի համապատասխանում այդ խմբի կարգավիճակին: Եվ այսպես, գործընթացը, որը սկսվել է սխալ, այսօր էլ գնում է ոչ այն ճանապարհով, որը կբերի ճշմարիտ լուծումներ:

Կա եւս մեկ հարց, որը քննարկվում է Եվրախորհրդում, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի շրջանակներում. դա Ղարաբաղի հայերի եւս մեկ կարգավիճակն է: Բոլոր ղարաբաղցիների համար վիրավորական ձեւով Ղարաբաղի հայությանը անվանում են ազգային փոքրամասնություն իր իսկ պատմական տարածքներում, պապենական օջախներում, ուր չի հիշատակվում որեւէ ազգի բնակություն, բացի հայերից: Իմ այս հարցը կարելի է ուղղել համանախագահներին. ինչպե՞ս է, որ մի ժողովուրդ, մի ազգ, որը իր պատմությունը գիտե սկսած այս թվարկությունից առաջ, հանկարծ իր պատմական հողում կոչվի փոքրամասնություն: Պարզ է, որ այդպիսի նախադրյալները չեն կարող բերել որեւէ դրական արդյունք:

*- Տարբեր մակարդակներում այսօր հաճախ արծարծում են փոխզիջումային լուծման գաղափարը: Որքանո՞վ է այն իրատեսական, Ձեր կարծիքով ո՞րն է այն:*

Մինչեւ հիմա արծարծված փոխզիջումային բոլոր տարբերակներն էլ մեծ մասամբ հիմնվում են սեփական գիտելիքների, այս կամ այն ձեւով քաղած տեղեկատվության վրա: Երբեք մի հակամարտությունը, բախումը չի նմանվել մեկ ուրիշին: Սա է պատճառը, որ այսօր նշում ենք՝ Ղարաբաղյան հիմնահարցը ծագել է ոչ ղարաբաղցիների պատճառով: Այն դրական լուծում կարող է ստանալ որպես ինքնատիպ հարց, այլ ոչ թե հեռուներից բերված օրինակներով: Եթե նույնիսկ երկու վեճ ամեն ինչով իրար նման են, բայց ընթանում են տարբեր տարածքներում, հնարավոր չէ եւ չի կարելի դրանք լուծել մեկ եղանակով:

Ղարաբաղի հարցի լուծման համար հեռուներից այնպիսի օրինակներ են բերում, որ տարակուսում ենք:

Մեր կարծիքով ո՞րն է փոխզիջումային տարբերակը: Ադրբեջանն ինքն է առաջարկել՝ իրեն դիտել ոչ թե որպես Սովետական Ադրբեջան, այլ նախորդ ադրբեջանական կամ տեղական թուրքերի հանրապետության իրավահաջորդ: Մենք ընդունում ենք այդ իրավական հիմքը: Վեճը գնում է հետեւյալի շուրջ. կար մի տարածք, որը Ազգերի լիգայի սահմանումն է, որը մի քանի անգամ գերազանցում է նախկին ԼՂՀ ինքնավար մարզի տարածքը, ավելի մեծ, քան այսօր հաջողվել է ազատագրել, եւ դա այն տարածքն է, որը ժամանակին չի ենթարկվել Ադրբեջանական «դեմոկրատական հանրապետությանը», եւ որը այսօր կարող է դառնալ բանակցությունների հիմք: Ունենք 1918-20-ական թվականների համապատասխան քարտեզներ, իրավական եւ իրավաբանական պարզ ու հստակ նյութեր: Հարցի լուծման մեր տարբերակը հետեւյալն է. ինչպես ժամանակին Ազգերի լիգան, գրագետ ձեւով, առանց շտապելու, ինչպես ցավոք արեցին ԵԱՀԿ-ն եւ ՄԱԿ-ը 1992թ., չշտապելով առաջարկեց հանրապետություններին, որոնք ունեն վիճելի հարցեր, ստեղծել հանձնաժողով, ճշտվեց, թե որ սահմաններում, որ տարածքներում է ադրբեջանական հանրապետությունն իր մեջ 1918-20-ական թվականներին ունեցել Լեռնային Ղարաբաղը, ինչ կարգավիճակ ուներ նա, իսկ մենք գիտենք, որ նա ուներ իր Ազգային խորհուրդը, ուներ իր շահերը, ուներ պայմանագիր Ադրբեջանական Դեմոկրատական հանրապետության հետ: Սա է մեր տարբերակը, որին մեզ վերադարձնում է ինքը՝ Ադրբեջանը: Եվ զարմանալի է, որ ԵԱՀԿ-ն որը տիրապետում է բոլոր այդ փաստաթղթերին, փոխանակ հետեւի դրան, հետեւում է այլ շահերի: Որո՞նք են այդ շահերը:

1992թ. դրանք մեզ համար միանգամայն պարզ էին, եւ ԵԱՀԿ-ն, եւ ՄԱԿ-ը չեն հետամնդում այնպիսի մի գեղեցիկ նպատակ, ինչպիսին կլիներ ճշմարտության վերականգնումը տարածաշրջանում: Այլ այսպիսի նպատակ են դրել՝ արձանագրել ԽՍՀՄ-ի փլուզումը: Այսպիսի շտապողականությունը հանգեցրել է երկարատեւ, արյունալի հետեւանքի, եւ Ադրբեջանի համառությունը փաստորեն դարձել է անընդմեջ ագրեսիա, որով իր պահանջներն է դրսեւորում ԼՂՀ-ի հանդեպ:

Ինչ վերաբերում է ԼՂՀ-ի ճանաչմանը, մենք գիտենք, որ Ռուսաստանը երկար ժամանակ չի ճանաչվել, Ադրբեջանը վեց ամիս չի ճանաչվել: Կան տարբեր ժամկետներ, մինչեւ միջազգային հանրությունը որոշում է այս կամ այն պետությանը ճանաչել: Մենք բավականաչափ համբերություն ունենք:

Մենք գտնում ենք, որ բոլոր այս տարբերակները գտնվում են իրավական դաշտի մեջ, դրա համար եւ ԵԱՀԿ-ը, եւ ՄԱԿ-ը ունեն ինստանցիոնալ հզոր ուժեր, որոնց շնորհիվ կարող են պարզել՝ որտեղ փնտրել այդ տարբերակները:

*- Փոխզիջումների համար ուրիշ ինչպիսի՞ տարբերակներ են առաջարկվում, եւ ի՞նչու են դրանք անընդունելի կողմերի համար:*

Ամենատարածված տարբերակը, որը, գիտենք, եկել է օվկիանոսի այն կողմից, տարածքների փոխանակումն է կամ նման մի բան: Դրանց հեղինակները պարզապես չեն պատկերացնում այդ տարածքները: Չգիտեն, որ ժողովուրդը նախընտրում է այնպիսի տարածք ունենալ, այնպիսի բնական սահմաններով, որը երաշխավորում է իր ապահով բնակությունը: Դրա համար նրանց առաջարկները չեն կարող դիմանալ որեւէ քննադատության, դրանք բոլորը սիրողական մակարդակի են:

Մյուս տարբերակը՝ արդյո՞ք այսօր պահանջվում է հարցը լուծել մինչեւ վերջ: Նավթային մագնատները շտապում են: Կասպիականի ընդերքից բխող առաջին խողովակաշարը պետք է սկսի գործել մինչեւ այս տարվա վերջը, մյուսները՝ հաջորդ տարիներին: Իսկ դրա համար պետք է Կովկասը լինի խաղաղ ու հանգիստ: Հիշենք ոչ-անհայտ փորձագետ ու քաղաքագետ Պոլ Գոբլին: Նա վերջերս հրապարակեց տարբեր աղբյուրներից քաղված հետեւյալ փաստարկները. «ղարաբաղցիներն ասել են՝ մինչեւ հարցը չլուծվի իրենց օգտին, ոչ մի կաթիլ նավթ չի հոսի դեպի Արեւմուտք»: Ես նույնիսկ ավելորդ եմ համարում եւ գտնում եմ, որ անբարոյական է նավթի շահը գերակայել ժողովուրդների իրավունքներին:

Պոլ Գոբլի ասելով, նման սպառնալիք են տվել նաեւ աբխազները, որ Վրաստանի տարածքով ոչ մի կաթիլ նավթ չի հոսի մինչեւ Աբխազիայի հարցի արդարացի լուծումը: Այս սպառնալիքների իրականացումը որքանո՞վ է իրատեսական՝ ուրիշ հարց է, բայց որ նավթատարների անցկացման ու գործարկման համար տարածաշրջանը պետք է խաղաղ լինի, անվիճելի է: Դրա համար Արեւմուտքը շտապում է: Իսկ մեր հարցը շատ լուծվողներից չէ: Օրինակ կարող ենք բերել Չեչնիան: Գեներալ Լեբեդը թեեւ ազատվեց Ռուսաստանի Անվտանգության կոմիտեի քարտուղարի պաշտոնից, բայց առ այսօր ուժի մեջ է մնում ռուս-չեչենական հակամարտության կարգավորման լեբեդյան պայմանագիրը՝ հարցի խաղաղ կարգավորման համար ժամկետ սահմանել մինչեւ դարի վերջը: Ղարաբաղյան հիմնահարցը եւս շատ լուծվողներից չէ:

Ժամանակը կթելադրի հարցի կարգավորման ուղիները, եւ երկու հարեւան ժողովուրդներն իրենք կընտրեն իրենց համար ընդունելի տարբերակները:

*Պատրաստեց*
*Մավր ԴԱՆԻԵԼՅԱՆԸ*